Արտակ Վազգենի Միրզախանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ստորև նշված անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

2026-11-12 14:10:04

Հայտատու	Ֆիզիկական անձինք
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	Սնանկության մասին ՀՀ օրենքի 76-րդ հոդված

Արտակ Վազգենի Միրզախանյանի սնանկության գործով կառավարիչ Ալբերտ Կարապետյանի կողմից 30.11.2026 թվականին ժամը 16։30-ին ք. Երևան, Եկմալյան 6, 4-րդ հարկ, թիվ 45 տարածք հասցեում կանցկացվի ՀՀ սնանկության դատարանի թիվ ՍնԴ/3997/04/23 սնանկության գործով 05.02.2024 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված Արտակ Վազգենի Միրզախանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ստորև նշված անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը.

ԼՈՏ 1 – Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Արտիմետում գտնող 0.8156 հա մակերեսով, թիվ 04-023-0135-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամաս, սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 26012026-04-0072: Գույքի մեկնարկային գինը կազմում է 4,641,300 ՀՀ դրամ:

ԼՈՏ 2 – Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Արտիմետում գտնող 0.2222 հա մակերեսով, թիվ 04-023-0135-0003 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամաս, սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 27022026-04-0047: Գույքի մեկնարկային գինը կազմում է 1,279,800 ՀՀ դրամ:

ԼՈՏ 3 – Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Արտիմետում գտնող 0.278 հա մակերեսով, թիվ 04-023-0124-0007 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամաս, սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ 06032026-04-0050: Գույքի մեկնարկային գինը կազմում է 2,389,500 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են

մասնակցության վճար և նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել, քան 300,000 ՀՀ դրամը) և 5 տոկոսները: Մասնակցության վճարը և նախավճարը ենթակա են վճարման Արտակ Վազգենի Միրզախանյանի սնանկության գործով թիվ 11817119024200 «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչև աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Աճուրդը կազմակերպվելու և անցկացվելու է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգին համապատասխան, որն էլ համարվում է սույն աճուրդի կանոնակարգը: Կայքում հայտարարության նիշերի սահմանափակմամբ պայմանավորված՝ վերոնշյալ կարգին համապատասխան հայտարարությունը կցվում է ստորև:

Կից - 3.pdf

37441459995

albertkarapetyan013@gmail.com

ք. Երևան, Եկմալյան 6, 4-րդ հարկ